Համաձայն
ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի
2008թ. մարտի 11-ի թիվ 68-Ն
որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ»
Կանոնակարգ 4/04-ի

**«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն**

**ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 48, հեռախոս՝ 59-20-20, էլ. փոստ՝ info@armbusinessbank.am**

---

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ք.Երևան 25 մայիսի 2017թ.

| Տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | պարտատոմս | պարտատոմս |
|---|---|---|
| Արժեթղթերի քանակը՝ | 10,000 հատ | 10,000 հատ |
| Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 10,000 ՀՀ դրամ | 100 ԱՄՆ դոլար |

Մենք՝ ներքոստորագրյալներս, հաստատում ենք, որ սույն հաշվետվության մեջ ներառված փաստերն ու տեղեկությունները հավաստի և լիարժեք են ու չեն պարունակում այնպիսի բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հրապարակված փաստաթղթի իմաստն ու ամբողջականությունը:

| **Արսեն Միքայելյան** | **Վարչության նախագահ** | | |
|---|---|---|---|
| (անուն, ազգանուն) | (պաշտոնը) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Մանվել Սահակյան** | **Վարչության անդամ, Վարչության նախագահի տեղակալ-Ֆինանսական դեպարտամենտի տնօրեն** | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոնը) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

| | | | |
|---|---|---|---|
| Վարդան Աղաջանյան | Վարչության անդամ, Վարչության նախագահի տեղակալ- Գործառնական դեպարտամենտի տնօրեն | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոնը) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Նշան Գրիգորյան | Վարչության անդամ, Վարչության նախագահի տեղակալ- Վարկային դեպարտամենտի տնօրեն | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոնը) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Վահան Մելքոնյան | Վարչության անդամ, Գանձապետական դեպարտամենտի տնօրեն-գլխավոր գանձապետ | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոնը) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Նարինե Սարգսյան | Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոնը) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Անի Ղամբարյան | Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման դեպարտամենտի տնօրեն | | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոնը) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում «ԴԱՎԹԱՇԵՆ» անվանումով մասնաճյուղ ստեղծելու, մասնաճյուղի կանոնադրությունը, գործունեության տնտեսական ծրագիրը, մասնաճյուղի կառուցվածքը, հաստիքացուցակը՝ աշխատակիցների վարձատրման չափերով ու պայմաններով հաստատելու վերաբերյալ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի թիվ 557-Ա, որոշումը՝ ընդունված 2017թ. մայիսի 24-ին (Խորհրդի որոշումից քաղվածքը կցվում է):

# «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ»

# ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 48)

ք. Երևան 25.05.2017թ.

## ՔԱՂՎԱԾՔ

## «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ԽՈՐՀՐԴԻ

## 24.05.2017թ. N 557-Ա «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ «ԴԱՎԹԱՇԵՆ» ԱՆՎԱՆՈՒՄՈՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ՝ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՉԱՓԵՐՈՎ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՈՐՈՇՈՒՄԻՑ

Քննարկելով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Վարչության 2017 թվականի մայիսի 24-ի՝ «ՀՀ Երևան քաղաքում «ԴԱՎԹԱՇԵՆ» անվանումով մասնաճյուղ ստեղծելուն, մասնաճյուղի կանոնադրությանը, գործունեության տնտեսական ծրագրին, մասնաճյուղի կառուցվածքին, հաստիքացուցակին՝ աշխատակիցների վարձատրման չափերով ու պայմաններով հավանություններ տալու և «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդին ներկայացնելու մասին» որոշումը, ղեկավարվելով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կանոնադրության 9.2.14) կետով, «Խորհրդի գործունեության կանոնակարգի» 5.2 կետի 14) ենթակետով՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.

1. Ընդունել ի գիտություն, որ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Վարչության 2017 թվականի մայիսի 24-ի՝ «ՀՀ Երևան քաղաքում «ԴԱՎԹԱՇԵՆ» անվանումով մասնաճյուղ ստեղծելուն, մասնաճյուղի կանոնադրությանը, գործունեության տնտեսական ծրագրին, մասնաճյուղի կառուցվածքին, հաստիքացուցակին՝ աշխատակիցների վարձատրման չափերով ու պայմաններով հավանություններ տալու և «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդին ներկայացնելու մասին» որոշմամբ հավանություն է տրվել.

1) Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում «ԴԱՎԹԱՇԵՆ» անվանումով մասնաճյուղ ստեղծելուն.

2) մասնաճյուղի կանոնադրությանը.

3) մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագրին.

4) մասնաճյուղի կառուցվածքին.

5) մասնաճյուղի հաստիքացուցակին՝ աշխատակիցների վարձատրման չափերով ու պայմաններով:

2. Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում ստեղծել «ԴԱՎԹԱՇԵՆ» անվանումով մասնաճյուղ:

3. Սահմանել, որ «ԴԱՎԹԱՇԵՆ» մասնաճյուղն իր գործունեությունն իրականացնելու է «Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դավթաշեն, Տ. Պետրոսյան փողոց, թիվ 1/11» հասցեում.

4. ..........................
5. ..........................
6. ..........................
7. ..........................
8. ..........................
9. ..........................
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Խորհրդի նախագահ՝ /ստորագրություն/ Վ. Գրիգորյանց

Իսկականի հետ ճիշտ է
Աշխատակազմի ղեկավար M. Ստեփանյան